

ՌԵԳՈ – ՏՈՒՐ

1. ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՌԵԳՈ ՏՈՒՐ» ծրագիրը նախատեսված է ՀՀ տարածքում ճանապարհորդության մեջ գտնվող օտարերկրյա քաղաքացիների բժշկական և այլ ծախսերի ապահովագրության համար:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

Ապահովագրության սուբյեկտներն են հանդիսանում՝

- Ապահովագրող-ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ Ապահովագրական ՓԲԸ
- Ապահովադիր՝ իրավաբանական անձ կամ 18 տարին լրացած ֆիզիկական անձ
- Ապահովագրված անձ-1-75 տարեկան ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ

3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

- Դժբախտ պատահար
- Սուր հիվանդություն

Ծրագրի շրջանակներում մինչև 65 տարեկան Ապահովագրված անձանց համար Ապահովագրական պատահար է հանդիսանում Սուր հիվանդությունը և Դժբախտ պատահարը: 65 տարեկանից բարձր անձանց համար Ապահովագրական պատահար է հանդիսանում միայն Դժբախտ պատահարը:



4. ՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ/ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐ

4.1 Շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն և տեղափոխում՝

- Շտապ օգնության բրիգադայի ժամանում, անհետաձգելի բուժօգնության տրամադրում կանչի վայրում, հրատապ խորհրդատվության կամ հոսպիտալացման ցուցման դեպքում՝ տեղափոխում հիվանդանոց:
- Ամբուլատոր (արտահիվանդանոցային) բժշկական օգնություն՝ բժշկի կամ բժիշկ մասնագետի ընդհանուր պրակտիկայի խորհրդատվություն, ներարկումներ, անզգայացում, վիրակապում, լաբորատոր և գործիքային աշխտրոշում, առաջնային վիրաբուժական օգնություն: Եթե Ապահովագրված անձի առողջական վիճակը թույլ չի տալիս ինքնուրույն այցելել բժշկական հաստատություն, ապա Ապահովագրողը կազմակերպում է համապատասխան բժիշկ մասնագետի տնային այց:
- Ստացիոնար (հիվանդանոցային) բժշկական օգնություն՝ Ապահովագրված անձի հրատապ հոսպիտալացում, ստանդարտ հիվանդասենյակ, վերակենդանացման միջոցառումներ:
- Դեղամիջոցներ և բժշկական պարագաներ՝ բժշկի կողմից նշանակված և անհետաձգելի բժշկական օգնության համար անհրաժեշտ քանակով, մինչև Ապահովագրված անձի Ապահովագրության տարածքից դուրս գալը և/կամ Ապահովագրության Պայմանագրի ժամկետի ավարտը:
- Վիրակապական պարագաներ, անշարժացնող միջոցներ (գիպս, բանդաժ), մետաղական կոնստրուկցիաներ և այլն:
- Շտապ ատամնաբուժական օգնություն:



4.2 Բժշկական աջակցում՝

- 24 ժամյա հայախոս, անգլիախոս և ռուսախոս բժիշկ-խորհրդատուի աջակցություն հեռախոսով:

4.1 կետում նշված ծառայությունների համար գործում է 48 ժամ սպասման ժամկետ, եթե Ապահովագրական պատահար է հանդիսանում Սուր հիվանդությունը:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ/ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

Գործողության ժամկետ	Ապահովագրավճար, ՀՀ դրամ	Ապահովագրական գումար, ՀՀ դրամ
5 օր	4.500	3.000.000
6-90 օր	4.500 + 6-րդ օրվանից սկսած +300 ՀՀ դրամ յուրաքանչյուր օրվա համար	

6. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԵՎ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԺԱՄԿԵՏ

- 5-ից մինչև 90 օր

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲ և ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

- Կնքմանը հաջորդող ամսաթվի ժամը 00:00-ից
- Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է Ապահովագրված անձի Ապահովագրության տարածք մուտք գործելուց 48 ժամվա ընթացքում: Նշված ժամկետից հետո կնքված Պայմանագրերը համարվում են անվավեր:



8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

Ապահովագրությունը գործում է՝

- ՀՀ տարածքում

9. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)

- Չհատուցվող գումար չի կիրառվում

10. ՊԱՀԱՆՁՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ և ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ,
- Ապահովագրված անձի անձը հաստատող փաստաթուղթ (ծննդյան վկայական), եթե Ապահովադրից տարբերվում է:

